

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
Տարածքային կառավարման, տեղական
ինքնակառավարման, բնապահպանության և
գյուղատնտեսության հարցերի մշտական հանձնաժողովի
2017 թվականի հունիսի 19-ի թիվ 1 որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ,
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳ**

1. Ընդհանուր դրույթներ

1. ՀՀ Ազգային ժողովի Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Ազգային ժողովի մարմին է, որը ստեղծվում և գործում է ՀՀ սահմանադրության, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ), Ազգային ժողովի աշխատակարգի և սույն աշխատակարգի (այսուհետ՝ Աշխատակարգ) համապատասխան:
2. Հանձնաժողովը ստեղծվում է օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար:

2. Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում՝
 - 1) իրականացնում է գլխադասային հանձնաժողովի լիազորությունները.
 - 2) իրականացնում է խորհրդարանական վերահսկողությունը.

- 3) պաշտոններում ընտրության կամ նշանակման համար Ազգային ժողովին առաջարկում է թեկնածուներ.
 - 4) կարող է հարցումներով դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց.
 - 5) կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ.
 - 6) կարող է ստեղծել ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր:
2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են երեքշաբաթյա ժամկետում քննարկել Հանձնաժողովի գրավոր հարցումը և գրավոր պատասխանել այդ հարցմանը:
3. Հանձնաժողովը կարող է իր իրավասությանը վերապահված հարցերի նախնական քննարկման և դրա արդյունքների Հանձնաժողով ներկայացնելու նպատակով՝ իր որոշմամբ, ստեղծել ենթահանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր: Ենթահանձնաժողովը կամ աշխատանքային խումբը կարող է լուծարվել Հանձնաժողովի որոշմամբ:
4. Հանձնաժողովի լիազորություններն ավարտվում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման պահից:

3. Հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը

1. Հանձնաժողովի նախագահը՝
 - 1) նախապատրաստում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը.
 - 2) գումարում է Հանձնաժողովի արտահերթ նիստ.
 - 3) մասնակցում է Խորհրդի նիստերին.
 - 4) ղեկավարում է Հանձնաժողովի քարտուղարությունը.
 - 5) համակարգում է ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի աշխատանքը.
 - 6) համակարգում է Ազգային ժողովի մարմինների և Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) հետ Հանձնաժողովի, ինչպես նաև Հանձնաժողովի քարտուղարության գործունեությունը.
 - 7) Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.
 - 8) ընթացք է տալիս և պատասխանում Հանձնաժողովին ուղղված գրություններին.

9) կարող է Հանձնաժողովի իրավասությանը վերապահված նախագծի վերաբերյալ կարծիքներ ստանալու նպատակով այն ուղարկել գիտական, ուսումնական հաստատություններ, ինչպես նաև Հանձնաժողովի նիստերին հրավիրել մասնագետներ.

10) Հանձնաժողովին իրազեկում է նրա որոշումների կատարման ընթացքի մասին.

11) Ազգային ժողովի աշխատակարգով սահմանված կարգով հաշվառում է Հանձնաժողովի նիստերից և հրավիրած խորհրդարանական լսումներից Հանձնաժողովի անդամների բացակայությունները: Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, հանձնաժողովի նախագահին Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում այդ ամսվա ընթացքում հանձնաժողովի նիստերից կամ հրավիրած խորհրդարանական լսումներից հանձնաժողովի անդամների բացակայության մասին տեղեկանք, որը հրապարակվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

2. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Հանձնաժողովի կողմից որոշված անդամը:

4. Հանձնաժողովի նիստերը

1. Հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, հրավիրվում են Ազգային ժողովի հերթական նիստերին նախորդող շաբաթվա ընթացքում՝ Խորհրդի որոշմամբ երկուշաբթի ժամը 14-ին.

2. Հանձնաժողովի արտահերթ նիստերը հրավիրում է Հանձնաժողովի նախագահը՝ իր կամ Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ: Արտահերթ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում: Գրությանը կցվում են օրակարգային հարցերի նախագծերը: Եթե գրությունը կամ օրակարգային որևէ հարց սահմանված պահանջներին՝

1) չի համապատասխանում և մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանց չի համապատասխանեցվում, ապա Հանձնաժողովի նախագահը վերադարձնում է գրությունը կամ օրակարգային տվյալ հարցին առնչվող փաստաթղթերը՝ նշելով պատճառների մասին.

2) համապատասխանում է, ապա Հանձնաժողովի նախագահը նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում հրավիրում է Հանձնաժողովի արտահերթ նիստ:

3. Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում Ազգային ժողովի նստավայրում: Այլ վայրում Հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի որոշմամբ, որի մասին Հանձնաժողովի նախագահը նախապես տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին:

4. Հանձնաժողովի նիստերը հրապարակային են:

5. Հանձնաժողովի հրապարակային նիստում, Հանձնաժողովի անդամներից, պատգամավորներից և հարցի քննարկմանը մասնակցելու իրավունք ունեցող այլ անձանցից բացի, կարող են ներկա լինել նաև՝

1) Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչը,

2) Վարչապետը կամ Կառավարության ներկայացուցիչը.

3) Աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները.

4) Ազգային ժողովի նախագահի խորհրդականը.

5) Հանձնաժողովի քարտուղարության մասնագետները.

6) Բյուջետային գրասենյակի փորձագետը.

7) Քննարկվող հարցի մասնագիտական փորձաքննություն իրականացրած՝ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները.

8) Հանձնաժողովի անդամների օգնականները.

9) նիստի լուսաբանումն ապահովող Աշխատակազմի ծառայողները.

10) Հանձնաժողովի որոշմամբ, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք:

6. Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողները Հանձնաժողովի նիստին կարող են ներկա լինել Հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, իսկ նիստի ընթացքում իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են իրենց համար առանձնացված տեղում:

7. Ազգային ժողովի նիստի ընթացքում Հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել միայն Սահմանադրությամբ կամ Կանոնակարգով սահմանված ժամկետների ապահովման նպատակով:

5. Հանձնաժողովի նիստերի անցկացման կարգը

1. Հանձնաժողովի անդամները Հանձնաժողովի հերթական նիստի հրավիրման մասին տեղեկացվում են ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, իսկ արտահերթ նիստի հրավիրման մասին՝ ոչ ուշ, քան մեկ ժամ առաջ: Հանձնաժողովի քարտուղարությունը Հանձնաժողովի նիստերի հրավիրման մասին էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում Հանձնաժողովի անդամներին:

2. Հանձնաժողովի նիստին ներկա Հանձնաժողովի անդամներին գրանցում է Հանձնաժողովի քարտուղարությունը:

3. Հանձնաժողովի նիստը նախագահողն ունի Կանոնակարգի 52-րդ հոդվածով սահմանված լիազորություններ՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են Հանձնաժողովի նիստը նախագահելու համար:

4. Հանձնաժողովի հերթական նիստում, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նիստում քննարկվող հարցերի հաջորդականությունը որոշում է նիստը նախագահողը:

5. Հանձնաժողովի նիստում հարցերը քննարկվում են հետևյալ ընթացակարգով՝

1) հիմնական զեկուցում.

2) հարցեր զեկուցողին, նրա պատասխանները, հարց տվողի և զեկուցողի արձագանքները.

3) հարակից զեկուցումներ.

4) հարցեր յուրաքանչյուր հարակից զեկուցողին, նրանց պատասխանները, հարց տվողի և զեկուցողի արձագանքները.

5) մտքերի փոխանակություն.

6) քվեարկություն:

6. Հիմնական զեկուցմամբ հանդես գալու իրավունք ունի Կանոնակարգով դրա իրավասությունն ունեցող անձը, իսկ հարակից զեկուցմամբ՝ Հանձնաժողովի նախագահի նշանակած հանձնաժողովի անդամը, ինչպես նաև Կանոնակարգով սահմանված կարգով օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի վերաբերյալ

գրավոր եզրակացություն ներկայացրած մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը:

7. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է (գրանցվել է) Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

8. Հանձնաժողովի նիստի սկզբում իրավազորության ապահովման դեպքում նիստը նախագահողը հայտարարում է նիստը բացված: Եթե գրանցված Հանձնաժողովի անդամների թիվը նիստի իրավազորության համար բավարար չէ, ապա գրանցումը շարունակվում է մինչև անհրաժեշտ թվով Հանձնաժողովի անդամների գրանցվելը, բայց ոչ ավելի, քան մեկ ժամ: Նշված ժամկետում նիստի իրավազորության՝

1) ապահովման դեպքում նիստը նախագահողը Հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է նիստն սկսվելու մասին.

2) չապահովման դեպքում Հանձնաժողովի նիստը համարվում է չկայացած:

9. Հանձնաժողովի հերթական նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում: Հանձնաժողովի հերթական նիստի, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի հրավիրած արտահերթ նիստի օրակարգի նախագիծը կազմում և Հանձնաժողովի նախագահին է ներկայացնում Հանձնաժողովի քարտուղարությունը:

10. Հանձնաժողովի օրակարգի հաստատման կամ նրա իրավասությանը վերապահված այլ որոշման ընդունման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն միայն Հանձնաժողովի անդամները, բացառությամբ Կանոնակարգի 78-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, այն է՝ հեղինակը կարող է իր զեկուցման ընթացքում կամ եզրափակիչ ելույթում նախագծի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել, ինչպես նաև հայտնել սահմանված կարգով ներկայացված մյուս առաջարկների վերաբերյալ իր դիրքորոշումը, և նույն հոդվածի 4-րդ կետերով՝ հանձնաժողովի անդամները, իսկ պատգամավորի կամ քաղաքացիական նախաձեռնության դեպքում՝ նաև Կառավարության ներկայացուցիչը, կարող են իրենց ելույթում նախագծի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել:

11. Հանձնաժողովի նիստում զեկուցողներին հարցեր տալու, ինչպես նաև նիստի վարման կարգի վերաբերյալ ելույթի իրավունք ունեն միայն պատգամավորները,

բացառությամբ Կանոնակարգի 78-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ Կառավարության ներկայացուցիչն իրավունք ունի հարցեր տալու զեկուցողին, և նույն հոդվածի 6-րդ կետով՝ հանձնաժողովի անդամները, ինչպես նաև հիմնական զեկուցողն իրավունք ունեն ելույթից հետո հարցեր տալու առաջարկների հեղինակներին:

12. Հանձնաժողովի նիստում ներկա լինելու իրավունք ունեցող այլ անձինք կարող են ելույթ ունենալ նիստը նախագահողի թույլտվությամբ կամ հանձնաժողովի որոշմամբ:

13. Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո: Հանձնաժողովի անդամը կարող է քվեարկել կողմ, դեմ կամ ձեռնպահ:

14. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

6. Հանձնաժողովում օրենքի նախագծի նախնական քննարկման ընդհանուր կարգը

1. Երբ Հանձնաժողովը նշանակվում է որպես գլխադասային, ապա նա Կանոնակարգով սահմանված կարգով՝

1) նախագծի առաջին և երկրորդ ընթերցումից առաջ Ազգային ժողով ներկայացնում է եզրակացություն, որի հիման վրա նախագիծն ընդգրկվում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգի նախագծում.

2) կարող է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ:

2. Եթե հարցի քննարկման սկզբում հիմնական զեկուցողը բացակայում է, ապա քննարկումը մեկ անգամ առանց քվեարկության հետաձգվում է: Եթե քննարկումը հետաձգվելուց հետո՝ երկամսյա ժամկետում, հիմնական զեկուցողը հանձնաժողովի նախագահին ուղղված գրավոր դիմումով հարցի քննարկմանը չի ներկայանում, ապա այն շրջանառությունից հանվում է:

3. Եթե Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդը Հանձնաժողովի եզրակացության վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նրանց ներկայացուցիչը կարող է Ազգային ժողովում հարցի քննարկման ընթացքում հանդես գալ հարակից զեկուցմամբ՝ ներկայացնելով այն:

4. Հանձնաժողովից բացի, մյուս մշտական հանձնաժողովները կարող են մինչև հարցի քննարկումն սկսվելը իրենց գրավոր եզրակացությունները ներկայացնել Ազգային ժողով: Այդ դեպքում մյուս մշտական հանձնաժողովի ներկայացուցիչն իրավունք ունի Հանձնաժողովում, ինչպես նաև Ազգային ժողովում նախագծի քննարկման ընթացքում հանդես գալու հարակից զեկուցմամբ:

5. Օրենքի նախագծի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը Կանոնակարգով և Ազգային ժողովի աշխատակարգով սահմանված կարգով Ազգային ժողով է ներկայացվում եզրակացության վերաբերյալ հանձնաժողովի որոշումն ընդունվելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերին նախորդող ուրբաթ օրը:

7. Առաջին ընթերցումից առաջ Հանձնաժողովում

(որպես գլխադասային) օրենքի նախագծի նախնական քննարկումը

1. Շրջանառության մեջ դրված օրենքի նախագիծը Հանձնաժողովում (որպես գլխադասային) քննարկվում է առանց փոփոխության՝ գրավոր առաջարկները ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իսկ նախագիծն Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգում ընդգրկվելու դեպքում՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

2. Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկների ամփոփաթեթը կազմում և Հանձնաժողովի նախագահին է ներկայացնում Հանձնաժողովի քարտուղարությունը:

3. Հանձնաժողովի նախագահի, ինչպես նաև օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի հեղինակի առաջարկությամբ Հանձնաժողովը կարող է սահմանել հարցի քննարկման հատուկ ընթացակարգ: Այդ ընթացակարգը սահմանելու մասին առաջարկը ներկայացվում է մինչև հարցի քննարկումը սկսվելը:

Հատուկ ընթացակարգով չի կարող սահմանափակվել զեկուցողներին հարց տվողների և ելույթ ունեցողների թիվը կամ չեն կարող կրճատվել Ազգային ժողովի աշխատակարգի սույն բաժնի 4-րդ կետով սահմանված ժամկետները:

4. Հարցի քննարկման ընթացքում՝

1) հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս նախագծի հեղինակը.

2) հեղինակը կարող է իր զեկուցման ընթացքում կամ եզրափակիչ ելույթում նախագծի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել, ինչպես նաև հայտնել սահմանված կարգով ներկայացված մյուս առաջարկների վերաբերյալ իր դիրքորոշումը.

3) Կառավարության ներկայացուցիչը զեկուցողին հարցեր տալու իրավունք ունի.

4) Հանձնաժողովի անդամները, իսկ պատգամավորի կամ քաղաքացիական նախաձեռնության դեպքում՝ նաև Կառավարության ներկայացուցիչը, կարող են իրենց ելույթում նախագծի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել.

5) ելույթի ընթացքում նախագծի վերաբերյալ բանավոր առաջարկ ներկայացրած անձը գրավոր ձևակերպում է իր առաջարկը և մինչև առաջարկների քվեարկությունը հանձնում է նիստը նախագահողին: Այդ դեպքում առաջարկը ներառվում է գրավոր առաջարկների ամփոփաթեթում և սահմանված կարգով քվեարկվում է:

6) սահմանված կարգով ներկայացված գրավոր առաջարկների հեղինակներն ելույթով հանդես գալու և հարցերին պատասխանելու իրավունք ունեն .

7) Հանձնաժողովի անդամները, ինչպես նաև հիմնական զեկուցողը, առաջարկների հեղինակների ելույթից հետո հարցեր տալու իրավունք ունեն:

5. Մտքերի փոխանակության ընթացքում արտահերթ ելույթի իրավունք ունեն Հանրապետության նախագահը, վարչապետը և Հանձնաժողովի նախագահը:

6. Եթե հարցի քննարկումն ընդմիջվել է, ապա այդ ժամկետը լրանալուց հետո քննարկումը վերսկսվում է այն փուլից, որից ընդմիջվել էր:

7. Քվեարկությունն իրականացվում է ձեռք բարձրացնելու միջոցով: Հանձնաժողովի անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ, դեմ կամ ձեռնպահ: Քվեարկության ընթացքում ձայները հաշվում է նիստը նախագահողը: Քվեարկության պահին նիստը նախագահողին դիմելն արգելվում է:

8. Հարցեր տալու կամ ելույթ ունենալու ցանկություն ունեցող անձինք դիմում են Հանձնաժողովի նիստը նախագահողին: Հարցերը տրվում, և ելույթ ունեցողները հանդես են գալիս ըստ դիմելու հաջորդականության՝ նիստը նախագահողի հայտարարությամբ, որտեղ հիշեցվում է հաջորդ հարց տվողի կամ ելույթ ունեցողի անունը, ազգանունը:

9. Հիմնական զեկուցողի եզրափակիչ ելույթից հետո՝

1) նախագիծն առանց փոփոխության դրվում է քվեարկության, եթե սահմանված կարգով դրա վերաբերյալ առաջարկ չի ներկայացվել.

10. Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկները, ինչպես նաև նախագծի քննարկման ընթացքում ներկայացված առաջարկները հանձնաժողովի նիստում քվեարկության են դրվում հետևյալ հերթականությամբ.

1) նախագծերի փաթեթից հանել նախագիծ.

2) նախագծերի փաթեթը համալրել նախագծով.

3) նախագծի որևէ մասն ամբողջությամբ հանել.

4) նախագիծը լրացնել նոր մասով.

5) նախագծի որևէ մաս շարադրել նոր խմբագրությամբ.

6) նախագծի հոդվածի որևէ մասում փոփոխություն կամ լրացում կատարել:

11. Այն առաջարկը, որին հանձնաժողովի անդամներից որևէ մեկը չի առարկում, համարվում է ընդունված առանց քվեարկության:

12. Այն առաջարկը, որն իր բովանդակությամբ հակառակ է արդեն ընդունված առաջարկին, քվեարկության չի դրվում:

13. Նախագծի միևնույն մասի վերաբերյալ իրարամերժ առաջարկները քվեարկվում են մրցակցության սկզբունքով՝ հետևյալ կարգով.

1) եթե քվեարկության է դրվել երկու առաջարկ, և դրանցից ոչ մեկը չի ստացել ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա առավել շատ ձայներ ստացած առաջարկը նորից է դրվում քվեարկության.

2) եթե քվեարկության են դրվել երկուսից ավելի առաջարկներ, և դրանցից ոչ մեկը չի ստացել ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա անցկացվում է

քվեարկության երկրորդ փուլ, որի ժամանակ քվեարկության են դրվում առավել շատ ձայներ ստացած երկու առաջարկները.

3) եթե մեկից ավելի առաջարկ ստացել է ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա ընդունված է համարվում առավել շատ «կողմ» ձայներ ստացած առաջարկը.

4) եթե մեկից ավելի առաջարկ ստացել է ընդունման համար անհրաժեշտ թվով և հավասար քանակությամբ ձայներ, ապա ընդունված է համարվում առավել քիչ «դեմ» ձայներ ստացած առաջարկը:

14. Առաջարկների քվեարկությունից հետո հիմնական զեկուցողը կարող է՝

1) նախագիծը քվեարկության դնել առանց փոփոխության, եթե նախագիծը վերապահված է Կառավարության բացառիկ իրավասությանը.

2) նախագիծը քվեարկության դնել իր համար ընդունելի ուղղումներով, եթե նախագիծը վերապահված է Կառավարության բացառիկ իրավասությանը.

3) նախագիծը քվեարկության դնել Հանձնաժողովի ընդունած բոլոր առաջարկների հիման վրա կատարված ուղղումներով.

4) նախագիծը քվեարկության դնել Հանձնաժողովի ընդունած առաջարկների մի մասի հիման վրա կատարված ուղղումներով.

5) նախագիծը լրամշակելու նպատակով հարցի քվեարկությունը հետաձգել, որը համարվում է ընդունված առանց քվեարկության: Լրամշակված նախագիծը Հանձնաժողովի առաջիկա նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ ներկայացվելու դեպքում այն սույն մասի 2-4-րդ կետերով սահմանված կարգով քվեարկության է դրվում այդ նիստում: Եթե հարցի քվեարկությունը հետաձգվելուց հետո՝ երկամսյա ժամկետում, լրամշակված նախագիծ չի ներկայացվում, կամ հեղինակի գրավոր դիմումով՝ Հանձնաժողովի որոշմամբ այդ ժամկետը չի երկարաձգվում, ապա նախագիծը շրջանառությունից հանվում է:

15. Եթե սույն բաժնի 9-րդ մասի 1-ին կետով, 14-րդ մասով կամ 16-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում քվեարկության դրված նախագիծն ընդունվում է, ապա համարվում է Հանձնաժողովի կողմից դրական, իսկ չընդունվելու դեպքում՝ բացասական եզրակացություն ստացած:

16. Սույն բաժնի 14-րդ մասի 4-րդ կետում նշված դեպքում բացասական եզրակացություն ստացած նախագծի հեղինակի համաձայնությամբ Հանձնաժողովի ընդունած բոլոր առաջարկների հիման վրա լրամշակված նախագիծը ներկայացնելու համար հատկացվում է հինգից մինչև տասն աշխատանքային օր: Եթե սահմանված ժամկետում՝

1.Որևէ խմբակցություն կամ պատգամավոր ներկայացնում է Հանձնաժողովի ընդունած բոլոր առաջարկների հիման վրա լրամշակված նախագիծ, ապա այն երեք աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան առաջիկա հերթական նիստերին նախորդող ուրբաթ օրը, առանց քննարկման քվեարկության է դրվում Հանձնաժողովի նիստում: Դրական եզրակացություն ստանալու դեպքում այդ նախագիծը, ինչպես նաև բացասական եզրակացություն ստացած մյուս նախագիծը համարվում են այլընտրանքային և Ազգային ժողովի նիստում քննարկվում են Կանոնակարգի 80-րդ հոդվածով՝ այլընտրանքային համարված նախագծերը քննարկվում և քվեարկվում են հետևյալ տարբերությամբ.

1.1 հիմնական զեկուցման իրավունք ունեն այլընտրանքային համարված օրենքի նախագծերի հեղինակները: Առաջինը հանդես է գալիս այն նախագծի հեղինակը, որն առաջինն է քննարկվել գլխադասային հանձնաժողովում.

1.2 հարցի քննարկումը կարող է հետաձգվել հիմնական զեկուցողների համաձայնությամբ.

1.3 նախագծերը քվեարկության են դրվում ըստ քննարկման հաջորդականության:

2. Եթե երկու նախագծերն էլ ստանում են ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա ընդունված է համարվում առավել շատ «կողմ» ձայներ ստացած նախագիծը:

3. Եթե երկու նախագծերն էլ ստանում են ընդունման համար անհրաժեշտ թվով և հավասար քանակությամբ ձայներ, ապա ընդունված է համարվում առավել քիչ «դեմ» ձայներ ստացած նախագիծը:

3. 1 Եթե լրամշակված նախագիծը ստանում է բացասական եզրակացություն, ապա այդ, ինչպես նաև մյուս նախագծի վերաբերյալ բացասական եզրակացությունները մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են Ազգային ժողով.

3.2 Հանձնաժողովի ընդունած բոլոր առաջարկների հիման վրա լրամշակված նախագիծ չի ներկայացվում, ապա սույն բաժնի 14-րդ մասի 4-րդ կետում նշված նախագծի վերաբերյալ բացասական եզրակացությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Ազգային ժողով:

17. Սույն բաժնի 16-րդ մասով սահմանված կարգը Կառավարության բացառիկ իրավասությանը վերապահված նախագծերի վրա չի տարածվում:

18. Սույն բաժնի 14-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև 16-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում լրամշակված նախագծերը ներկայացվում են Հանձնաժողով, իսկ սույն հոդվածի 14-րդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողով:

19. Կանոնակարգի 78-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքերում լրամշակված օրենքի նախագիծը կարող է ներկայացվել Ազգային ժողով և Կանոնակարգով սահմանված կարգով ընդգրկվել Ազգային ժողովի հերթական նստաշրջանի կամ նիստի օրակարգի նախագծում՝ Հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ:

20. Հանձնաժողովի նիստն արձանագրում է Հանձնաժողովի քարտուղարությունը: Արձանագրությունը ստորագրում է նիստը նախագահողը:

8. Երկրորդ ընթերցումից առաջ Հանձնաժողովում

(որպես գլխադասային) օրենքի նախագծի նախնական քննարկումը

1. Առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագիծն առանց փոփոխության Հանձնաժողովում (որպես գլխադասային) քննարկվում է գրավոր առաջարկները ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իսկ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգում միևնույն օրենքի նախագծի առաջին և երկրորդ ընթերցմամբ քննարկելու մասին հարցերն ընդգրկվելու դեպքում՝ համապատասխանաբար Կանոնակարգի 41-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, այն է՝ եթե արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված են միևնույն օրենքի նախագիծը մի քանի ընթերցմամբ քննարկելու մասին հարցեր, ապա նախաձեռնողը ներկայացնում է հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ, որով նախագծի վերաբերյալ գրավոր

առաջարկները և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար նախատեսվում է առնվազն երեքական ժամ, կամ 44-րդ հոդվածի 7-րդ մասով՝ եթե արտահերթ նստաշրջանի օրակարգում ընդգրկված են միևնույն օրենքի նախագիծն առաջին և երկրորդ ընթերցմամբ քննարկելու մասին հարցեր, ապա նախաձեռնողը ներկայացնում է հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ, որով նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկները և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար նախատեսվում է առնվազն երեքական ժամ, նախատեսված Ազգային ժողովի որոշմամբ սահմանված ժամկետում:

9. Հանձնաժողովի նախնական քննարկման արդյունքում

Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված

նախագծերի վերաբերյալ եզրակացությունը ներկայացնելու կարգը

1. Սահմանադրության փոփոխությունների, օրենքների, ինչպես նաև Ազգային ժողովի որոշման, հայտարարությունների, ուղերձների նախագծերի նախնական քննարկման արդյունքում Հանձնաժողովը իր եզրակացությունն Ազգային ժողովի նախագահին է ուղարկում Հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքով:
2. Նախագծի վերաբերյալ Հանձնաժողովի (որպես գլխադասային) բացասական եզրակացության դեպքում դրա պատճառները նշվում են Հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքում:
3. Հանձնաժողովի (որպես գլխադասային) քարտուղարությունը Հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում է Ազգային ժողովի ինտերնետային կայքում:

10. Հանձնաժողովի խորհրդարանական վերահսկողությունը

1. Հանձնաժողովը Կանոնակարգի 112-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ սահմանված իրենց իրավասությունների շրջանակներում՝
 - 1) խորհրդարանական վերահսկողություն է իրականացնում օրենքների կատարման ընթացքի նկատմամբ.

2) կարող է տեղեկություններ պահանջել Կառավարության ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

2. Հանձնաժողովի իրավասության շրջանակում խորհրդարանական վերահսկողության թեման, ինչպես նաև դրա առնչությամբ իրականացվելիք միջոցառումները սահմանվում են Հանձնաժողովի որոշմամբ:

3. Հանձնաժողովի անդամներից բացի, խորհրդարանական վերահսկողության թեմայի, ինչպես նաև ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն Ազգային ժողովի նախագահը, մշտական հանձնաժողովները և խմբակցությունները:

4. Խորհրդարանական վերահսկողության առարկային վերաբերող հարցերի պարզաբանման առնչությամբ Հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողով հրավիրել իրավասու պաշտոնատար անձանց, որոնք պարտավոր են ներկայանալ Հանձնաժողովի նիստին եւ պատասխանել հարցերին:

5. Պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները Հանձնաժողովի հարցմամբ նրան են տրամադրվում, իսկ Հանձնաժողովի անդամներն այդ տեղեկություններին կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով: Հանձնաժողովի անդամները Հանձնաժողովի հարցմամբ պահանջված տեղեկություններին առնչվող նյութերին կամ փաստաթղթերին կարող են ծանոթանալ նաև դրանց գտնվելու վայրում:

6. Խորհրդարանական վերահսկողության արդյունքով իրավասու մշտական հանձնաժողովը կարող է ընդունել գրավոր եզրակացություն և Ազգային ժողովի աշխատակարգով սահմանված կարգով այն ուղարկել Ազգային ժողովի մյուս մարմիններ, ինչպես նաև իրավասու մարմիններ և պաշտոնատար անձանց:

7. Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Կանոնակարգի 24-րդ գլխով սահմանված կարգով:

11. Հանձնաժողովի ենթահանձնաժողովները և աշխատանքային խմբերը

1. Հանձնաժողովի ստեղծած ենթահանձնաժողովում կարող են ընդգրկվել միայն Հանձնաժողովի անդամները: Ենթահանձնաժողովում կառավարող և ընդդիմադիր

խմբակցությունների կազմում ընդգրկված Հանձնաժողովի անդամների համամասնությունը պահպանվում է:

2. Հանձնաժողովի ստեղծած աշխատանքային խմբում կարող են ընդգրկվել պատգամավորը, ինչպես նաև Հանձնաժողովի, Ազգային ժողովի աշխատակազմի կամ խմբակցության փորձագետը (մասնագետը), պատգամավորի օգնականը և այլ մասնագետներ:

3. Ենթահանձնաժողովի կամ աշխատանքային խմբի խնդիրները, գործունեության ժամկետներն ու կարգը սահմանվում են, ինչպես նաև ենթահանձնաժողովի կամ աշխատանքային խմբի ղեկավարը նշանակվում են Հանձնաժողովի որոշմամբ:

4. Ենթահանձնաժողովի կամ աշխատանքային խմբի ղեկավարը կազմակերպում և ղեկավարում է նրա աշխատանքները, ինչպես նաև կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

5. Իր գործունեության արդյունքների մասին ենթահանձնաժողովը կամ աշխատանքային խումբը սահմանված ժամկետում զեկուցում է Հանձնաժողովի նիստում:

12. Խորհրդարանական լսումները

1. Հանձնաժողովը իրեն վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ:

2. Լսումները հրավիրելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշմամբ սահմանվում են լսումների օրը, ժամը, անցկացման վայրը և ընթացակարգը:

3. Լսումների հրավիրման մասին Հանձնաժողովի որոշումն ուղարկվում է Ազգային ժողովի նախագահին և տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

4. Լսումների վերաբերյալ տեղեկատվությունը դրանց անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տրամադրվում է զանգվածային լրատվության միջոցներին:

5. Հանձնաժողովը կարող է նախապատրաստել իր հրավիրած լսումների թեմայի վերաբերյալ ներկայացված գրավոր ելույթներ, առաջարկներ, եզրակացություններ, տեղեկանքներ, ինչպես նաև լսումների արդյունքներն ամփոփող այլ նյութեր, որոնք

կարող են հրապարակվել Հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ: Աշխատակազմը լսումների արդյունքում կազմված արձանագրությունը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այն տեղադրում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

13. Հանձնաժողովների գործունեության ապահովումը

1. Աշխատակազմը Ազգային ժողովի Հանձնաժողովներին ապահովում է նրանց գործունեության համար անհրաժեշտ միջոցներով:
2. Հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում է Հանձնաժողովի քարտուղարությունը, որը Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, գործում է Հանձնաժողովի աշխատակարգով և Աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ Հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ:

14. Աշխատակարգի ընդունումը և փոփոխումը

Սույն աշխատակարգն ընդունվում կամ դրանում փոփոխությունները կատարվում են Հանձնաժողովի նախագահի կամ անդամի առաջարկությամբ՝ Հանձնաժողովի որոշմամբ: